Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
17.07.2015 թվականի թիվ 110-Լ հրամանի
Արա Զոհրաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՏԵՍԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետև՝ ՀՀ փաստաբանների պալատ)** վարչական տարածքում տեսանկարահանում և տեսաձայնագրում իրականացնելու սույն կարգը **(այսուհետև՝ Կարգ)** սահմանում է ՀՀ փաստաբանների պալատի վարչական տարածքում տեսանկարահանումներ և տեսաձայնագրություններ իրականացնելու ընթացակարգը, ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի, փաստաբանների և ՀՀ փաստաբանների պալատի տարածք մուտք գործած այլ անձանց իրավունքները, սահմանափակումները, պարտականությունները, արգելքները, գաղտնիությանը և պատասխանատվությանը վերաբերող ընթացակարգերը:
2. ՀՀ փաստաբանների պալատի տարածքում կատարված տեսանկարահանումը և (կամ) տեսաձայնագրությունը, անկախ դրանց բովանդակությունից, համարվում են ՀՀ փաստաբանների պալատի սեփականությունը:
3. Կարգը պարտադիր է ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի և ՀՀ փաստաբանների պալատի տարածք մուտք գործած այլ անձանց համար:
4. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի նիստերի հեռարձակման առանձնահատկությունները սահմանվում են այլ իրավական ակտերով:
5. ՀՀ փաստաբանների պալատի վարչական տարածքում տեսանկարահանում և (կամ) տեսաձայնագրություն կատարվում է վարչական շենքի, շենքում գտնվող գույքի ու մարդկանց անվտանգության ապահովման համար:
6. Կարգում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ իմաստը (նշանակությունը).

1) **ՀՀ փաստաբանների պալատի վարչական տարածք՝** ՀՀ փաստաբանների պալատին օգտագործման իրավունքով հանձնված

տարածք,

2) **մասնավոր տարածք՝** զուգարաններ, հանդերձարաններ,
3) **ադմինիստրատոր (վարչավար)՝** տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ: Մինչև համապատասխան աշխատակցի ներգրավումը՝ վարչատնտեսական դեպարտամենտի ղեկավար:

II. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

7. ՀՀ փաստաբանների պալատի վարչական տարածքում կատարված նկարահանման նյութերը հասանելի են ՀՀ փաստաբանների պալատի նախագահին, ֆինանսական տնօրենին, վարչատնտեսական դեպարտամենտի ղեկավարին կամ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թույլտվությամբ այլ անձին:
8. ՀՀ փաստաբանների պալատը, կարող է ՀՀ փաստաբանների պալատի վարչական տարածքում իրականացնել տեսանկարահանում և/կամ տեսաձայնագրում, բացառությամբ մասնավոր տարածքներից:

III. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԳԵԼՔՆԵՐ

9. Տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման նյութերը կարող են պահպանվել նաև կոշտ սկավառակի վրա:
10. Բոլոր այն վայրերում, որտեղ տեղադրված են տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման սարքեր, ՀՀ փաստաբանների պալատը պարտավոր է տեղադրել համապատասխան նախազգուշացնող նշան:
11. Տեսանկարահանման կամ տեսաձայնագրության նյութերը կարող են օգտագործվել որպես ապացույց ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի և այլ անձանց նկատմամբ կարգապահական (այդ թվում՝ աշխատանքային) վարույթ, ինչպես նաև քաղաքացիական, քրեական և վարչական վարույթ իրականացնելիս: Տեսանկարահանման կամ տեսաձայնագրության նյութերին ծանոթանալու դիմումները քննարկում է ՀՀ փաստաբանների պալատի վարչատնտեսական դեպարտամենտի ղեկավարը:
12. Արգելվում է տեսանկարահանում և (կամ) տեսաձայնագրություն կատարել մասնավոր համարվող տարածքներում:

IV. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

13. ՀՀ փաստաբանների պալատը պետք է հարգի անձանց մասնավոր կյանքի իրավունքը և ապահովի տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման գաղտնիությունը՝ բացառությամբ կարգի 11-րդ կետով սահմանված դեպքի:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14. Կարգն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 20-ից և գործում է անժամկետ:
15. Կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից:
16. Կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ փաստաբանների պալատի ֆինանսական տնօրենը: